




ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ


ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

1 ՕԳՈՍՏՈՍ 1900

(ԹԻԻ 10)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկզբնականութիւնը արտատնտեսի մէջ, Երուանդ Սրմաքէշխանեան. — Իսլամական աշխարհը. — Գիտական արձագանգ (Խոնարհ Կաթեղեղեղեղեղ), Յ. Ս. Փափաղեան. — Ո՞ր ես, ո՞ր ... (Մանուկ), Տիգրան Աճէմեան. — Անհուն հսկողները, Երուանդ Օտեան. — Վեներիկի հանդիսարանին, Ե. Սրմաքէշխանեան. — Պակաս մը, Վահան Մանուկեան. — Յ. Կ. Պոննուզեան, Ե. Ս. — Կիսամանակ :



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Շ Ս Ի Ի Ղ ԾԾ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուկարիոյ համար սարեկան 10 ֆր. , վեցամսեայ 5 ֆրանք :
Արատասհմանի » սարեկան 12 ֆր. , վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 սուլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգին , նամակ , յօդուած , լրագիր և գիրք՝ պէտք է
ուղղուին հետևեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շաւիղի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա-
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՕԳՈՍՏՈՍ 1900

Թիւ 10

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐՏԱՍՄԱՆԻ ՄԷՋ



Ի գաղթային հոսանքը միայն աշխարհական տարրերէ կը բաղկանար գրեթէ . այդ հոսանքին մէջ հայ ընկերութեան բոլոր դասակարգերը ներկայացուցիչներ սունէին . մինակ կրօնական դասը բացակայ էր : Երբ ոչխարները՝ գայլերէ հալածական խոյս տան խառնիխուռն, հովիւները , անհոգ , թոյլ ու վեհերոտ , փոխանակ անոնց պաշտպանութեանը վազելու , լաւագոյն կը սեպեն վարտիւր մնացած ոչխարներուն հսկողութիւնը շարունակել անվտանգ :

Արտասահման խուժող գաղթականութեան հստ կարգերուն մէջ հազիւ կարելի էր նշմարել քանի մը բակեղներ , մէկ երկու վարդապետ ու քանի մը տէր պապա , ուրոնք՝ ապահովապէս՝ իրենց հօտին ետեւէն վազելու փութկոտութեան համար չէ որ հոն կը գանուէին , այլ միեւնոյն սարսափը — թէև

ամենէն քիչ ազդասողներն ըլլան սարսափէ — և՛ աւելի ճիշդը՝ շահադիտութեան թագուն նպատակներ , քշած նետած էին զանոնք փախըտականներուն մէջ :

Այս իրողութիւնն իսկ շատ պայծառ ապացոյց մըն է թէ մեր կրօնը իր կոչման արժանի հանգամանքով չի ներկայանար , քանի որ չի փութար իր ժողովրդեան հետ մէկ գծի վրայէ քալել , ցոյց տալ անոր ճամբուն անհարթութիւնները , սրտապնդել զայն իր վհատութեան դառն վայրկեաններուն մէջ , և նըշանակել այն ուղղութիւնը ուսկից անիկա հարկ է որ ընթանայ : Այս բոլոր անհրաժեշտ բաներուն բացակայութիւնը գլխաւոր շարժառիթն է որ մեր ժողովուրդը անվստահօրէն և սառն սկեպտութեամբ կը վերաբերուի իր կրօնական առաջնորդներուն հանդէպ , սրոնց համար չղգար հարկաւոր յորդանքը , չակնածիւր անոնցմէ , սրով երկու տարրերուն մէջ որ բարոյական ու հոգեւորական սերտ կապերով սմբապէս

կապուած պիտի ըլլային, անձրպետ մը կը գայանայ ուր միշտ ընդլայնելու վրայ է :

Ինչո՞ւ, սակայն, մեր կրօնականութիւնը այլևս ազգին յարմարագոյն առաջնորդն ըլլալու առաքիչնութիւնը կորուսած կեդեւայ. ի՞նչ է բուն, էական պատճառը ուր ժողովուրդը՝ պէպի ազատութեան ճամբան իր հեւիհեւ վազքին մէջ գրեթէ յոյս չի դնել կղերին վրայ :

Այս երկու հարցումներուն պատասխանը հայ ազգային յեղափոթեան մէջ հարկ է վնտուել :

Երբ յեղափոխութեան գաղափարը՝ արծիւի թեւերու վրայ համբարձիկ՝ սկստու աւառնիլ հայութեան վերելք, զարթուցանելով զայն խորունկ թմբիւնն ուր թաղուած էր. երբ ազգը, զինքը ճնշող ու հարստահարող տարրին դէմ ընդվզելու կրակը վառ զգաց իր մէջ, հասկցաւ թէ ազատութեան համար արիւն թափելը պայման է, առանց վայրկեան մը վհատելու, առանց պայքարին երկարաձգումէն յաղթահարուելու. անդին՝ մեր կրօնական դասակարգը՝ ընդհանուր առմամբ՝ մեկուսի ու տարանջատ գրութեան մը մէջ գտնուեցաւ. չը դղրդեցաւ նոր գաղափարին բախման տակ, լայնքին ետեւը ու է եռչգաց. շարունակեց քնանալ քունը զոր դարերէ ի վեր կը քնանար :

կղերը հնաւանդ պահպանողականութեան գերի մնաց. ազգը կար-

ծեց տեսնել եկեղեցիի չորս պատերուն մէջ, ուր ինքը անքոյթ ու ապահով կը մնար. երբեք չկրցաւ խելք հասցնել այն մոլեկան ու դիւցազնական թափին զոր յեղափոխութիւնը կուտար յանկարծ պարտիւսան լուծին սակ հեծող ժողովուրդի մը : Ու երբոր ազգային ազատութեան գաղափարը կուգայ բոյն կը դնէ ժողովուրդի մը մըտքին մէջ, անոր բարբերը տարօրինակ յեղաշրջութիւն մը կը կրեն. ա՛լ կը դադրի անգիտակից մոլեւանդ մը ըլլալէ, իր կրօնական բարձրագոյնութիւնը կը ձուլուի կը կաղապարուի յեղափոխութեան մեծ աւետարանին վրայ. « տուք զիտյոներն կայսեր . . . » ը այլևս իրեն նպատաւոր եղանակով մը կը մեկնաբանէ ինքնաբերաբար :

Այս հանգամանքներուն տակ, մեր կրօնականութիւնը — իզմիրլեաններ ու խարախաններ բաց առնելով — կը դադրէր ըլլալէ բնական առաջնորդը ազգին՝ անոր գաղափարի ու զգացման անակնկալ վերանորոգութեան տապնապալի շրջանին :

*
* *

Արտասահման վտղոզ խուռնամբոխ հայութեան քանի՞ կրօնաւոր հետեւեցաւ. կամ թէ այն մէկ քանի վարդապետներն ու քահանաները որոնք հոսանքին հետ տարուցան գրեթէ մեքենայորէն, առանց

խղճի ու պարտականութեան դըր-
դումէն շարժուած ըլլալու, ի՞նչ
գեր կատարեցին. — ոչինչ :

Այն այցելու ու հոգեւոր հովիւ-
ները և առաջնորդները զորս էջ-
միածին ու Պատրիարքարան՝ վեր-
ջին չորս տարուան մէջ՝ արտասահ-
ման զրկեցին, նպատակայորմար,
մեր վիճակին պահանջած ուղղու-
թեան հետեւեցան. — ամենեւին :

Ընդհակառակն, ուր որ վար-
դապետ մը, այցելու հովիւ մը կամ
առաջնորդ մը կայ, հոն խռովու-
թիւնը, կռիւը, կուսակցական
պայքարները կարմիր սասակու-
թիւն մը կստանան, հակառակու-
թեան ոգին աւելի կ'արժարծուի, և
կը պարզուի կատարեալ անմիաբա-
նութեան, երկպառակութեան ու
անհամերաշխութեան ախուր վիճակ
մը, բոլորովին հակառակը անոր զոր
արդար էր ակնկալել ժողովուրդի
կրօնական առաջնորդի մը ներկա-
յութենէն :

Եւ մտածել որ կղերը, արտա-
սահմանի մէջ, ամենէն յարմար
անձն էր անտեղի պայքարներուն
կրակը մարելու, հակընդդէմ ըզ-
դացումներն ու տրամադրութիւն-
ները հաշտեցնելու, ստեղծելու հա-
մերաշխութեան մեծ ոգին, որուն
տաք ու սփոփարար շնչին ներքեւ
ապահովապէս արտասահմանի հա-
յութիւնը այժմ բոլորովին տար-
բեր պայմաններով պիտի ներկայա-
նար :

Եկեղեցիներուն մէջ մտիկ ըրէք
այդ վեղարաւորներուն քարոզնե-
րը. նորէն այն միեւնոյն յաւիտե-
նական մգլոտ բնաբաններուն վրայ
ձեւուած չափուած, ու մեքենաբար
գոց սորվուած կրօնական ուղորմե-
լիութիւններն են, զորս քսան-քսո-
սուն տարի առաջուրէ սկսեալ՝ կը
թափթփեն Պոլսոյ ու գաւառներու
եկեղեցիներուն մէջ, ապուշ անհաս-
կընայի խրատականներ, միտախը
բնազանցութեամբ թրմուած, որոնք
ընդվզող աներեսութեամբ կը հրամ-
ցուին ժողովրդեան մը, որ մտքի ու
սրտի վերածնութեան տաղնապնե-
րուն մէջ անհունապէս կարօտ էր
իր բարոյական պապակը գոհացնող
գաղափարներու, սկզբունքներու և
յորդորներու :

*
* *

Եկեղեցականութեան բուն կոչման
հակասող այն վիճակը, ուր այժմ
լճացած կը մնայ մեր կղերը, մէկն
է այն պայմաններէն որոնք կը խա-
թարեն մեր սղգային գոյութեան
ներդաշնակութիւնը : Այդ վիճակը
բարեփոխելը ամենագոյն գործ
է : Մեր հիմակուան ալեկոծուած
գրութիւնը թող չի սար լուրջ ձեւ-
նարկներ ընելու, որպէս զի եկե-
ղեցականութիւնը թոթու ենք իր մա-
հատիպ թմրութենէն՝ սղգային
փրկութեան լծակներէն մէկը ընե-
լու համար զայն :


Ու ամէն անգամ որ մտածեմ

մեր հայ կրօնաւորներուն մասաւրական ու բարոյական յամառ կա-
յունութեան վրայ, մինչ հայ ցեղը,
անոնց շուրջ, ամէն կողմէն, մեծ
փոխանցութեան մը յուզումնալից
տեսարանը կը պարզէ, միաբա կու-
գայ այն կատակերգական ճոռոմ
չեչար որով քահանայ մը, դպրո-
ցական հանդէսի մը տտեն, բեմին
վրայէն, սա կեղծաւոր խօսքը նե-
սեց ժողովուրդին .

— Դարու մը մէջ կ'ապրինք, որ
կը քալէ . . .

Եւ մտածել որ դուք, երանելի՛
տէր հայրեր, յաւիտենապէս կանգ
առած էք այդ քալող դարուն
մէջտեղ :

Երուանդ Մումախանյան



ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՅԽԱՐՀԸ

Չինական արիւնալի դէպքերուն
առթիւ, իսլամական աշխարհին
բռնած կամ բռնելիք ընթացքը
յոյժ մեծ կարեւորութիւն մը սա-
ցած է, նախ անոր համար որ Չի-
նաստանի մէջ միլիոնաւոր իսլամներ
կան որոնք կարեւոր դեր մը կը խա-
ղան ներկայ ծանր դէպքերուն մէջ,
և յետոյ՝ որովհետեւ եւրոպացիներ
բուն կամ քրիստոնեաներուն հան-
դէպ պոքսըրներուն ու առ հասարակ

չինացիներուն վարմունքը շատ ուր-
տի ու զգացման մտտիկ կերեւայ
թուրքիոյ իսլամներուն արիւնկզակ
մասին, այնպէս որ փոքր քաջալեր
մը կրնայ բունկցնել ամենէն կոյր
ու խելագար մոլեռանդութիւնը և
պատճառ հանդիսանալ այնպիսի
դէպքերու որոնք դուցէ չինական-
ներն ալ գլին անցնին :

Երբորդի բորեանը՝ կարծես Չի-
նաստանի հողին վրայ թափուած
արեան բոյրէն դինով՝ դրեթէ հա-
մարձակօրէն իր սաք համակրու-
թիւնը յայտնեց իր պոքսըր եղբայր-
ներուն շահատակութեանցը համար :
Վերէն արտայայտուած այս զգա-
ցումը դրեթէ իսկոյն տարածուեցաւ
թուրք շրջանակներու մէջ : Մինչ ա-
սոր հակառակ հրապարակ հանուած է
յոյժ շահագրգիռ և յոյժ կարեւոր
բողոքագիր մը զոր պատրաստած է
Պոլսոյ իւլէմաններուն կրօնական մաս-
նախումբը, պարտաւերու համար այն
անարժան իսլամները որոնք ակներեւ
համակրութիւնցոյց կուտան չինական
արիւնհեղութեանց հեղինակներուն :

Աւասիկ իւլէմաներու մասնա-
խումբին այդ յայտարարութեան
թարգմանութիւնը .

Երբորդի կարգ մը ազգեցիկ ան-
ճանց զրդու մովը, որոնք կը ջանան,
ինչպէս միշտ, տգէտ ամբոխին կոյր
մոլեռանդութիւնը գրգռել ի նպատ
ներկայ ոէթիմին, քանի մը իւլէմա-
ներ համարձակած են մղկիթներու
մէջ, բեմին վրայէն ակնարկութիւն-
ներ շնի Չինաստանի դէպքերուն՝

բռնելով բարբարոս կռապաշտներուն կողմը, ընդդէմ քրիստոնէից, որոնց աստուածայայտ կրօնքը Քուրանին կողմէ ճանչցուած է :

Նուիրական պարտք կը սեպենք յայս Եւրոպայի ժխտել եւ պախարակել այս անարժան եւ եղեռնական արարքը՝ ստորեւ պարզելով մեր կրօնքին ճշմարիտ սկզբունքները մարդկանց իրաւունքին տեսակէտովը :

1. — Նուիրական հանգամանքը դեպաններուն՝ բոս իսլամական օրինագրքի :

Հիճրէթի 6 թուականին, մեր սուրբ մարգարէն Մուհամմէտ, իր աշակերտներէն 1500 հոգի հետը առած, ուղեց Մէտինէէն Մէքքէ դառնալ : Այս վերջին քաղքին մտնելուն՝ անոր տիրող կռապաշտներուն զրկեց Հերաշ անուն զեսպան մը, որ պաշտօն ունէր վստահացնելու զանոնք իր ուղղեւորութեան խաղաղական հանգամանքին մասին, որ էր ուխտագնացութիւն մը Քեպպէի կռապաշտները նետուեցան այդ զեսպանին վրայ, զոր պիտի սպանէին եթէ անիկա չի յաջողէր ձեռուընուն խոյս տալ : Այն ատեն մարգարէն իր ազգականներէն Օսման անուն մէքքէցի մը զըրկեց, զոր կռապաշտները չհամարձակեցան մեռցնել, բայց բանտարկեցին զայն ամէն իրաւունք արհամարհելով :

Կրօնական այս աւանդութիւնը, որ ծանօթ է իրաւագրքի անուամբ (Մէքքէի մօտ գիւղ մը), իբրեւ օրինակ մը մարգարէին կողմէ արուած, հիմ կը ծառայէ իսլամական սկզբունքին, որուն համեմատ զեսպանի մը անձը նուիրական է ու անբռնաբարելի, զայն զրկող ժողովրդեան ցեղը կամ կրօնքը ի՛նչ ալ ըլլայ : Անոր նկատմամբ ոչ միայն գէշ վարմունք ներելի չէ, այլ եւ այս սկզբունքը կը հր-

րամայէ յարգել զայն եւ նոյն իսկ ի հարկին ամէն վտանգի դէմ պաշտպանել :

2. — Սկզբունք հազուած Քուրանէն՝ Ս. Գրոց ժողովուրդներուն (հիստեայ եւ հեայ) հանդէպ բռնուելիք ընթացքի մասին :

Ամէն իսլամի պարտքն է յարգել անոնց ինչքը իբրեւ իրենք եւ անոնց կեանքը ինչպէս իրենք,

3. — Սկզբունք ի մասին միւսքիմիսի (անուն որով կը նշանակուին իսլամ երկիր ճամբորդող կամ բնակող օտարականները) :

Անոնք գրուած են իսլամ ուղղամտութեան պահպանութեանը ներքեւ եւ անոնց կեանքը հարկ է որ պաշտպանուի :

Եղբակացութիւն. Կրօնական նախընթաց սկզբունքներուն վրայ յենելով, մենք, իսլամներս, պարտաւոր ենք պաշտպանել Ս. Գրոց ժողովուրդները, այսինքն քրիստոնեաներն ու հրեաները :


Մեր հաւատքն ու մեր ազգութիւնը պահելով հանդերձ, պարտաւոր ենք, եւ ասիկա նոյն ինքն մեր Քուրանին համեմատ, Եւրոպայի քրիստոնեաներուն կողմը անցնել, որոնք աւետարանին կը հետեւին եւ որոնք կը քալեն քաղաքակրթութեան եւ առաջդիմութեան ուղիէն : Կռապաշտներուն կողմը բռնել եւ աստուածայայտ կրօնքին ժողովուրդները նախատելը հակառակ է մեր կրօնական օրէնքին : Իսլամութիւնը հոմանիչ չէ բարբարոսութեան եւ անդթութեան !!! :

Հետեւապէս բոլոր ուժովնիս կը բաղձենք այն իսլամներուն դէմ — այս անուան անարժան — որոնք պալատին գաղտնի ու աղէտաւոր ներքընչմամբը տկարութիւնն ունեցան չինական բարբարոսութեան համաձայն գըր-

նուեալու: Կը բողոքենք անոնց դէմ ոչ միայն յանուն մարդկութեան, այլ եւ յանուն մեր Ս. կրօնքին:

Կուզէինք որ մեր զայրոյթի ազակը լսուէր համօրէն քաղաքակիրթ աշխարհէն:

Ձերմիւ կը բաղձանք տեսնել մեր կառավարութիւնը որ իր կրօնական ազդեցութիւնը զործածէ Չինաստանի 30 միլիոն իսլամներուն վրայ եւ անոնց զրկէ քարոզիչներ, հրաւիրելու զանոնք՝ ըստ կրօնի՝ պաշտպանել երկրին մէջ զանուած քրիստոնեաները կռապաշտներու մոլեգնութեան դէմ:



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԹՈՒՆԱՒՈՐՈՂ ՀԱԳՆԵԼԻՔՆԵՐԸ

Ապականուած ուտելիքներէ, խմելիքներէ եւ օգէ թուեալու իրը կը հասկնայինք, բայց հազնելիքներէ մնասու իրը բնաւ մտքերնուս չէր անցներ:

Բրօֆէսօր Լանտուզի որ կերելի շատերու նման նորութիւններ հաղորդելու սիրահար է, վերջերս ուսումնասիրութիւն մը ներկայացրնելով Բարիզի բժշկական կաճառին՝ ուշադրութիւն կը հրաւիրէ անիշիկով ներկուած կօշիկներու վրայ որոնք մարդը կը թուեալուին:

Պէտք է գիտնալ որ անիշիկը միւրոպ մը չէ, մարմնոյն մէջ ժուռ

չգտր ե ոչ ոլ արեան սպիտակ գնդիկներուն հետ մտքառում (fagositos) ունի, սակայն թոյն մըն է, քիմիական տրտազրութիւն մը, որ շատ կը դարձածուի տրհեստներու, մանաւանդ ներկարարութեան մէջ:

Լանտուզի իր ուսումնասիրութեան մէջ խօսելով 18 ամսուան աղեկի մը վրայ, կը պատմէ լծէ ըստ սովորութեան պտոյտի ելլելու համար իր սանաուին հետ ողջ սուղջ տունը ձգելով ժամ մը յետոյ հիւանդ, աչուընէրը կիսափուկ, գունատ, շրթունքները, արտեւանունքները եւ մատուրներուն ծայրերը կապուացած, խոր քունի մէջ ե գրեթէ դիակնացած տուն մտած է... սարսափահար սունաուին գրկին վրայ:

Հարկ եղած բժշկական դարմանները անմիջապէս կատարուելով վտանգին առաջքը կառնեն սակայն մինչև իրիկուն աղեկը անզգայ կը մնայ. քննութեան մը կը ձեռնարկուի եւ հաստատուելէ յետոյ որ աղեկը ո ե է մնասաւար ըմպելի մը կամ ուտելիք մը չէ առած՝ կեղրակացնեն որ թուեալուին պատճառները արտաքին եղած են. ուստի բժիշկը երկար փնտաուք մը կընէ ու կարգ մը վարտումներէ ետք կանդ կառնէ կօշիկներուն վրայ որոնք առաջ դեղնագոյն էին ե յետոյ սուզի պատճառաւ սեւ ներկել տարով առաջին անգամ հագցուցած էին աղեկին: Սանաուին

կրկին հարցաքննուելով կը հաստատուի որ աղեկը երբեք բերնին մտեցուցած չէր կօշիկները և ոչ ալ զանոնք շօշափելէ . յետոյ մատուընէրը բերնին տարած , ինչպէս սովոր են ընել փոքրիկները . ուրեմն թոյնը ուղղակի մտրթին միջոցաւ թափանցած էր մարմնոյն :

Սակայն այս ենթագործիւնը հաստատական հիմ մը չունենարւն՝ կասկածը միշտ կասկած մնացած էր մինչեւ որ քանի մը օրեր , յետոյ նոյն աղեկին եղբայրը , 6 տարեկան , միեւնոյն կերպով կը հիւանդանայ : Աւելի մանրակրկիտ քննութիւն մը վերջապէս կը համոզէ բժիշկը թէ նմանօրինակ կօշիկի գործածութեանէն առաջ եկած է այդ երեւութիւն ալ և անպատճառ անխոչիտ թու նաւորման մը հանդէպ կը գտնուի , ինչպէս ցոյց կուտային նշանները :

Թնդիրը կը մնար ներկարարիններկը տարրարածել , ինչ որ կընէ և արդարեւ կը գտնէ թէ անոր մէջ 100ին 92 անխոչիտ կար . ուրեմն այդ թոյնին շոգին էր որ ջերմութեան օժանդակութեամբ աղաքներուն մտրթէն ծծուելով ներս թափանցած էր և պատճառ եղած այդ վտանգներուն :

Հանտուզի այս դէպքը իմանալով իր կողմէն ալ քննութեան կը ձեռնարկէ և հաստատելով որ արդարև ուրիշ ընտանիքի մը եօթը զաւակները միեւնոյն պայմաններուն մէջ ներկուած կօշիկներ գործածելուն ա-

նոնցմէ վեցը թունաւորուած են և մին միայն զերծ մնացած է , այն ալ սպիտակ գուլպայ հագնելուն համար , կառավարիչ Բրոֆէսոր Պրուարաէլի որ ներկարարին քովէն գրաւուած ներկով և իւզի մէջ լուծուած անխոչիտով փորձեր կատարել տայ հնդկախոզերու և ճագարներու վրայ :

Փորձերը կըլլան ոչ թէ այդ կենդանիներուն ներկուած կօշիկ հագցընելով , այլ պարզապէս անոնց մտրթը օծելով այդ ներկով ու իւզով , ու ահա արդիւնքը գրական կըլլայ :

Խնդիրը կը բերուի բժշկական կաճառին , ուր Էսկիւլապի աշակերտները շատ գիւրին որոշման մը կը յանգին . այն է արդիւնը այսուհետեւ անխոչիտ գործածութիւնը կօշիկի ներկերու համար և զգուշացընել ժողովուրդը :

Բայց չկարծուի թէ միայն կօշիկով մարդիկ զնասուած են հագնելիքներէ . գունաւոր գուլպան ալ մեծ դեր կը խաղայ թունաւորման մէջ : Ասկից քանի մը տարիներ առաջ տեղեկագրուած է որ գունաւոր գուլպայ հագնողներուն զգացած ստքի անհանդատութիւնները , ինչպէս քերուըտուք , կօշիկներու մէջ բզզիւն , ասղնաուք և այլն որոնք քաղելու իսկ երբեմն արգելք կըլլան , առաջ կուգան այդ գուլպաները ներկելու համար պատրաստուած բաղադրութեան մէջ մկնդեզ (arsenic) գործածուելէն , որ ստեղծութիւն մըն է :

Իսկ այն զանազան ըմպելիները
զորս կը խմենք զբուսարաններու մէջ,
գեղեցիկ, գրաւիչ և զմայլելի գոյ-
ներով և այն նախապահուած սը-
նունդները որոնք մեր սովորու-
թիւններուն մէջը մտնել սկսած են,
ամենքն ալ վտանգաւոր թոյներ կը
պարունակեն :

Ատոնց վրայ խօսելու համար չէր
որ սկսայ գրել քրոնիկս . ատոնք
ուրիշ յօդուածի մը նիւթը պիտի
ըլլան . բայց զգուշութիւնը կանու-
խէն ընելը վնասակար չէ , մանա-
ւանդ որ վտանգը հասնելէն յետոյ
խրատը օգուտ չունի և անծանօթի
աշխարհին մէջ երթալէն վերջ զղջու-
մը իր բարոյական հանգամանքը
կը կորսնցնէ :

Յ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ



Ո՞ՒՐ ԵՍ, ՈՒՐ ...

(ՄԱՆԻՇԱԿԻՆ)



Հովիտ ու լեռ մեհիկ ու լուռ ման կուգամ .

Քեզ 'ի խնդիր
Ծաղիկ ընտիր,
Սիրաբոյր .

Շրջիմ անխոնջ լեռներ ամբողջ բիւր ան-
գամ,

Կ'որոնեմ քեզ
Մանիշակ հեզ,
Ո՞ւր ես, ո՞ւր ...

Կըղձա՛մ փարիլ բերթի կապոյտ, սիրաւէս,
Ծծել շունչիդ,
Դալար փունջիդ
Հրապոյր .

Դու որ բուրեա կեռնիք սրտի, սէ՛ր չաւէս,
Կը ցանկամ քեզ
Կարօտակէզ,
Ո՞ւր ես, ո՞ւր ...

Կըղձա՛մ քեզ հետ լեռան ծոցը դալարիլ,
Դառնան պահուն
Սփռել անուն
Կենաց բոյր .

Մացառի թակ ուռնամալով գալարիլ
Քու սիրաբունջ
Իրանիդ շուրջ,
Ո՞ւր ես, ո՞ւր ...

Հովիտ ու լեռ
Մեհիկ ու լուռ
Ման կուգամ,

Քեզ 'ի խնդիր
Ծաղիկ ընտիր,
Սիրաբոյր .

Շրջիմ անխոնջ
Լեռներ ամբողջ
Բիւր անգամ,

Կ'որոնեմ քեզ
Մանիշակ հեզ,
Ո՞ւր ես, ո՞ւր ...

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ



ԱՆՔՈՒՆ ՀՍԿՈՂՆԵՐԸ (*)

Մանր, դժուարին, անտանելի է անքուն հսկողներուն վիճակը: Գիշերն ի բուն պէտք է դարանակալ սպասեն փողոցին անկիւնը, դաշոյնը ձեռքերնուն մէջ խնամքով պահած, որպէս զի պարկեշտ մարդոց կասկածը չարթնցնեն, դէմքերնին անճանաչելի դարձուցած, որպէս զի իրենց ոճիրէն ետքը կարող ըլլան անյայտ մնալ: Ու ժամերով անքուն պիտի հսկեն՝ մինչեւ որ յաջողին որ եւ է անցորդի մը կունակին միտել իրենց դաշոյնը եւ արագ փախչիլ՝ ուրիշ մութ անկիւն մը երթալ դարանակալ ըլլալու համար:

Անոնք չունին խաղաղ, հանգիստ քունի երջանկութիւնը, սրտի ու հոգիի մաքրութեան տրուած հանդարտութիւնը: Իրենց միտքը միշտ լարուած է անխոստովանելի արարքներու պատրաստութեանց համար ու իրենց խիղճը միշտ սանջող, արդէն գործուած ոճիրներու յիշատակովը:

Դատապարտուած են անքուն հրսկողներ մնալու յաւիտեան: Իրենց պատիժն է ասիկա:

Ինե՛ղճ անքուն հսկողները:

(*) Այս յօդուածը կը հրատարակեմք, նրկատելով որ արտասահմանի մամուլին մէկ մասը կարելոր բաժին մը կը յատկացնէ դեռ անձնական անհարկի յարձակումներու և անիրաւ գատափետումներու: Նո՛ւր, իր գծած ծրագրովն իսկ, ինքզինքը պարտաւոր կ'զգայ ի հարկին մատնանիշ ընելու այս տեսակ ֆուսակար ուղղութիւնները, կարելի եղածին չափ դարմանել ջանալով անոնց ազդեցութիւնը:

* * *

Անքուն հսկողները իրենց եղբայրակիցները ունին ամէն տեղ ու ամէն դասակարգի մէջ, նոյն իսկ գրական հրապարակին վրայ: Հո՛ն անքուն հսկողը դարանակալ եղած է որ եւ է թերթի մը անկիւնը, մինչեւ գլուխը մխրճուած վատաւողջ մթնոլորտի մը մէջ, դէմքը խնամքով ծածկած եւ զրպարտութեան ու ատելութեան զէնքերով զինուած: Անքուն կը հսկէ անիկա, յարձակելու համար, պատեհ ժամուն, որ եւ է համբաւի մը, օգտակար ու բարեբար գործունէութեան մը, իրական արժանիքի մը վրայ: Իր բարոյական տձեւութիւններուն գիտակից, մտաւորական անկարողութեամբը տուայտող իր գաճաճ ու սպառնող հոգին ատով միայն կրնայ զինքը տոչորող նախանձի կրակը մարել:

* * *

Զղուանքով ու միանգամայն ցաւով կը զիտուի որ, մանաւանդ մեր լրագրական հրապարակին վրայ, կը բազմապատկուին այդ տեսակ անքուն հսկողները, որոնք քաջալերուած իրենց ընծայուած հիւրընկալութենէն՝ անվայել յարձակումներու մէջ միայն կը փայլեցնեն իրենց մտային աննշան կարողութիւնները: Այսօր որ եւ է անձանօթ մէկը ամբնածանր ամբաստանութիւնները կը թափէ պարկեշտ մարդու մը գլխին, եւ թերթեր կան որոնք առանց վարանելու, առանց ամենափոքր քննութեամբ գրուածին ստուգութեանը տեղեկանալու, կը հրատարակին զանոնք:

Նւ ցաւալի է հաստատել որ այդ

միասակար լրագրութիւնը մեր մէջ առջ եկաւ ճիշդ երբ մամուլի ազատութիւն վայելող երկիրներու մէջ թերթեր ունեցանք, այնպէս որ այդ ազատութիւնէն օգուտ քաղեցինք գրեթէ իրար զրպարտելու, իրար նախատելու, իրար վատահամբաւելու համար:

Եւրոպական ազգերու մէջ ալ կան անշուշտ այդ տեսակ թերթեր եւ անքուն հսկողներ, որոնք մամուլի ազատութիւնը միայն անձնական ատելութիւններու գործիք կ'ընեն, բայց պէտք չունէինք անպատճառ մեզի իբր օրինակ առնելու զանոնք: Ասկէ զատ, նոյն իսկ եւրոպական այդ կարգի մամուլը իր սխալ քայլերուն մէջ տեսակ մը արժանապատուութիւն, տեսակ մը ազնուութիւն ունի եւ երբեք որ եւ է զրպարտիչ կամ հայհոյիչ յօդուած չհրատարակեր առանց ստորագրութեան, այնպէս որ յարձակեալը գիտէ ո՛ւրկէ կուգայ հարուածը եւ կրնայ ըստ այնմ ինքզինքը պաշտպանել ձեռքը եղած միջոցներով: Այսպէս՝ եթէ գիտակցաբար մէկը զրպարտելը մասամբ ներելի է եւրոպական կարգ մը թերթերու համար, միեւնոյն ժամանակ երեսը ծածկելը աններելի համարուած է միշտ:

*
* *

Մեր այս քանի մը խորհրդածութիւններուն ճշգրութիւնը կուգայ հաստատել Շարտի մէկ թիւին մէջ երեւցած բարեգեան թղթակցութիւն մը, կեղծ ստորագրութեամբ:

Ինքզինքը ծածկող այդ պարոնը փորձ մը կ'ընէ իր թղթակցութեամբը անուանարկելու Պ. Արշակ Չօպանեանը, ի նպաստ Հայաստանի որբերուն հազմակերպած ցերեկոյթին առթիւ:

Այդ անանուն թղթակիցը կը ստէ իր բոլոր հաստատութիւններուն մէջ: Իր ծանր ամբաստանութիւնները կ'ընէ առանց ամենափոքր ապացոյց մը, դէպք մը, իրողութիւն մը առաջ բերելու, առանց գրական ամենագոյն փաստի մը, առանց վկայութեան մը: Բն այսպիսով կը ջանայ արատաւորել գործ մը որուն համար Բարեգեան հայ գաղթականութիւնը գովեստ ունորհակալութիւն յայտնած է Պ. Արշակ Չօպանեանի:

Անհիմն է երբ այդ քողարկուած թղթակիցը կ'ըսէ թէ Պ. Չօպանեան զանազան գիւնըրով տոմսակներ ցըրուած է:

Անհիմն է երբ կ'ըսէ թէ ցերեկոյթին ծախքն ու մուտքը ինք բացած գոցած է:

Անհիմն է երբ կ'ըսէ թէ ինք եղած է առանձին թատերական ներկայացման գործադիր մարմինը, հաշուառուն, հաշուատուն, գանձապահը:

Անհիմն է երբ կ'ըսէ թէ Պ. Չօպանեան միեւնոյն ժամանակ մասնաւոր շրջաբերականներով իրեն համար հանգանակութեան սկսած է:

Կը յերիւրէ սկիզբէն մինչեւ ետքը, գիտակցօրէն եւ առանց քաշուելու, վասն զի ոչ ոք պիտի գիտնայ իր ով ըլլալը՝ ճշմարտութեան դէմ մեղանշած ըլլալը իր երեսին տալու համար, եւ Պ. Չօպանեան այդ կերպով անկարող պիտի ըլլայ գտնել զինքը՝ եղած անբաստանութեանց համարը պահանջելու համար:

*
* *

Եւ ասիկա տխուր բան մըն է. եթէ անքուն հսկողը առանձին, հաղուադէպ երեւոյթ մը ըլլար, անշուշտ կարե-

ւորութիւն չտալով պիտի անցնէինք. բայց, աւագ, ինչպէս վերը ըսի, ամբողջ մամուլ մը եւ տղեղ բարքերով սնած աշխատակիցներու լնդէոն մը ունինք շուրջերնիս ուր օրէ օր ընթերցողներու ներդամիտ անտարբերութեան եւ նոյնիսկ վատառողջ քաջալերանքներու շնորհիւ կ'աճի: Ատենը չէ՞ արդեօք ճար մը մտածելու ասոր:

Պիտի փորձեմ, Շուրջ մէջ, յօդուածներու շարքով մը աւելի ընդարձակօրէն ներկայացնել մեր արտասահմանի մամուլին այդ փտած մասը եւ միեւնոյն ժամանակ կըցածիս չափ ցոյց տալ մամուլին ազատութենէն օգտուելու միջոցը եւ քննադատելու սահմանը:

Եթէ յօդուածներէս օգուտ մը առաջ գայ, այն ատեն ներող ըլլանք անքուն հսկողներուն որոնք իրենց չարութեամբը բարիք մը գործած պիտի ըլլան եւ անոյց քուն մաղթելով իրենց ա'լ չզբաղինք իրենցմով:

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻՆ

Առանց մեծ բան մը հասկցած ըլլալու ձեր պատասխանէն, — վասն զի այլանդակ հայերէնով մը գրուած էր ան, ինչպէս արդէն բուսական ատենէ ի վեր կը գրուին ձեր հանդէսին մէջ հրատարակուած յօդուածները, մանաւանդ անոնք որ ձեր խմբագրական տափակ գրչէն ելած են, — կը փութամ ըսել թէ արտասահմանի հայ գաղթականութեան մէջ հինի եւ նո-

րի խնդիր յարուցանելը արդէն անպատեհ բան է: Արտասահմանի հայ մամուլին վրայ կատարած վարկպարազի տեսութեանս մէջ ամենեւին չէի մտաբերած լրագիրները ու հանդէսները ժամանակագրական կարգով յիշել, անկարեւոր նկատելով այդ բանը. վասն զի ժամանակագրական բաղդատութեան մը մէջ, պիտի ստիպուէի արտասահմանի նորաստեղծ մամուլին դէմ քանի մը խեղճ բեկորներ միայն յիշել ուսասնայ եւ թրքահայ մամուլէն, քանի որ այս վերջինին մեծագոյն մասը շատոնցուընէ գոյութիւն ունէր երբոր տակաւին արտասահմանի մէջ գրեթէ ձեր երկու հանդէսները միայն կային: Թող որ եթէ հինի ու նորի փոսն խնդիրը մէջ իսկ ձգէի, ապահովապէս պատուոյ տեղը նորին պիտի տայի, ու բաղդատութեան մէջ նորաստեղծ մամուլն է որ առաւելաւը շուրջութեան դերը պիտի խաղար:

Ուրախ եմ որ սխալ մեկնած եմ ձեր այն խօսքը թէ կարգ մը թերթեր «միակ նպատակի մը կը ծառայեն» . կը գովէք եղեր այդ նպատակը. ատիկա շատ սփոփաբար երեւոյթ է. երանի թէ մեր բոլոր կրօնաւորները այդ հարցի մասին այդքան լուսաւոր մը տածուաներ ունենային: Միայն, ներեցէք որ դիտել տամ ձեզ թէ ջղային չափադանց փափուկ գրութեան մէջ կը գտնուիք. շատ զգուշութեամբ եւ քաղաքավարի կերպով արուած պատասխաններէն իսկ թունտ կելլաք, ու անհասկնալի կերպով սուր espritներ կը գլտորցնէք ու այնքան կը մոռնաք ինքզինքնիդ որ գրուածին մէջ « ես » կը գործածէք, եւ իբրեքս կ'ստորագրէք:

Անկեղծօրէն կըսեմ որ բնաւ չեմ վիրաւորուած ձեր գրութեանն. փո-

խաղարձաբար, կը սիրեմ՝ յուսալ որ
դուք ալ, կամ լաւ եւս դուն ալ
(խմբագրութիւնը) չես վերաւորուիր
այս գրուածին ոգիէն, զոր անհաճոյ
եւ անփափուկ չընծայելու համար բոլոր
բարեացակամութիւնս ի գործ դրի:

Ե. ՍՐՄԱՔԷՇԵԱՆԼԵԱՆ



ՊԱՆԱՍ ՄԸ

Խորնացիին հետ որ իր նախ-
նիքները կը գառափեատէր թէ զիր
ու գրականութիւն սիրողներ չէին,
մենք ալ շատ անգամ մեր նախորդ-
սերունդը կը քննադատենք որ
մտոցած է իր մասին առատ ու
որոշ անդեկութիւններ կտակելու
մեզի. և անոր այդ անհոգ ծու-
լութիւնը այնչափ աւելի գառա-
պարտելի կը գտնենք երբ մանա-
ւանդ հուզենք անցեալին պատմու-
թիւնը ուրուագծել, ստոյգ և ման-
րամասն անդեկութիւններով աւելի:

Այդ արդար քննադատութիւն-
ներէն սակայն խոշոր բաժին մը
կարելի է պատշաճեցնել արդի սե-
րունդին ալ, մեր ներկայ գրողնե-
րուն ալ, որոնք միեւնոյն ճիւղը
մշակելով, միեւնոյն ճամբէն քայլե-
լով, բոլորովին երեսի վրայ կը ձը-
գեն, անմշակ կը թողուն այնպիսի
նիւթեր որոնք այնքան կարեւոր են,
այնքան անհրաժեշտ մեր կեանքին
պատմական ամբողջութեանը:

Վերջին գաղթականութենէն ի
վեր արտասահմանեան գրականու-
թիւն մը ունինք. վառնայի մէջ
մանաւանդ երկու կիսաշարաթա-
թերթեր վէճերու և կռիւներու հետ
կը մշակեն նաեւ տարբեր նիւթեր
ալ. սասնց վրայ աւելցուր նաեւ
պարբերական Շառիղը որ իր հան-
դարտ ու համերաշխական ուղեգը-
ծով ջանացած է ու պիտի ջանայ
անշուշտ աւելի մշակուած և աւելի
աշխատուած արտադրութիւններով
ճոխացնելու մեր պարբերական դը-
րականութիւնը:

Պակասը, սակայն, որ կը նշմար-
ուէր կիսաշարաթաթերթերուն մէջ,
կը տեսնուի նաեւ Շառիղի մէջն ալ,
և որ Պուլկարիոյ հայ գաղթակա-
նութեան ծագմունք և անցեալի
մասին հետազօտութիւնն է:

Վենետիկի և վիեննայի բազմաւր-
դիւն միաբանները, հայրենի երկ-
րին բազմակողմանի ուսումնասիրու-
թիւններուն և անզագրութիւննե-
րուն հետ մտոցած չեն նաեւ իրենց
մտերը դանուած իտալական ու լե-
հական գաղութներուն անցեալը
պրպտելու:

Մեր պուլկարահայ, ուսմանա-
հայ գրողներու մտքէն չանցաւ սա-
կայն պահ մը իրենց շուրջը նայելու,
— քանի որ ներկայ գաղթականու-
թիւնը բոլորովին չէ խմբուած,
չէ ձուլուած —, և հիմին ծագումը
ու անցեալը պրպտելու:

Որչափ կը յիշեմ, 3-4 տարուան

չըջանին մէջ ուումանահայ քահա-
նայի մը տետրակը և մէյմըն ալ Պ.
Գնթունիի մէկ յօդուածը տեսած
եմ Այտտի կորսուած հայ գաղ-
թականութեան մասին :

Պուրկարիոյ և Ռումանիոյ հայ
գաղութներուն պատմութիւնը գը-
րելը՝ առանձին անհատի մը համար
չառ դժուար պիտի ըլլար , և շատ
տուղի պիտի նստէր , քանի որ հարկ
պիտի ըլլայ ամէն տեղերն այցելել ,
ամէն անկիւն խուզարկել , ինչ որ
երկար ժամանակի կարօտ է : Եւ
այս դժուարութեանց առաջինին
պատճառաւ էր որ երկար առնէ
ի վեր այս դաշտաբարձ փայտայելով
հանդերձ վարանած մնացել էի ,
քանի որ իմ բարի յօժարութենէս
դուրս տարբեր բաներ մըն ալ ան-
հրաժեշտ էին :

Ինչ որ առանձին անհատի մը
համար շատ դժուար , գրեթէ ան-
հնար է , կարելի է սակայն գլուխ
հանել հաւարաբար , և աւելի կարճ
միջոցի մէջ :

Եւ որովհետեւ այս բանին հա-
մար ամենէն յարմար և կարող կը
տեսնեմ մեր դասատուները , որ
հոս հոն կը պաշտօնավարեն պուր-
կարական և ուումանական քաղաք-
ներ , ուստի կը հրաւիրեմ զիրենք
որ այս արձակուրդի օրերէն սկսե-
լով բարեհաճին լուրջ կերպով ու-
շագրութեան առնել առաջարկս և
ձեռնարկել ուսումնասիրելու իրենց
չուրջը գանուածները :

Աւերորդ չեմ սեպեր , անոնց աչ-
խատութիւնները նոյն ուղղութեան
մէջ պահուելու համար , հետեւեալ
կէտերը ներկայացնելու :

Ա. — Պէտք է ժողուել եկեղեցի-
ներու հիմնարկութեան և խաչքա-
րելու արձանագրութիւնները , և
հին ու կարեւոր տապանագրերը :

Բ. — Եկեղեցական պատկերնե-
րու , ծածկոցներու և այլ սպաս-
ներու արձանագրութիւնները :

Գ. — Եկեղեցիներու մէջ և կամ
գուրոյր անհատներու քով գանուած
ձեռագիրներու որպիսութիւնը և
անոնց յիշատակութիւնը :

Դ. — Եկեղեցիներու մէջ գրու-
նուած ֆէրմաններու , կոնդակներու
և նամակներու պատճէնները , ինչ-
պէս նաեւ եթէ մասնաւորներու
քով ալ գտնուին :

Ե. — Ժողովուրդին ծերերը հար-
ցափորձել թէ ի՞նչ լսած են իրենց
նախնեացը մասին :

Զ. — Բուն հին գաղթականու-
թենէն յետոյ ուրիշ ի՞նչ հոսանք-
ներ և կած են , և ասոր համար
պէտք է ազգանուններ ալ նկատի
առնել :

Է. — Եթէ հայախօս են՝ անոնց բար-
բառները հետազօտել և միանգա-
մայն հասկնալ թէ հայկական , ըն-
տանեկան , ընկերական ի՞նչ սովո-
րութիւններ ու աւերորդապաշտու-
թիւններ կան :

Ը. — Պէտք է ներկայ ազգարնա-
կութեան մասին որոշ ծանօթու-

թիւններ տալ, թէ ո՛րչափ է, ի՛նչ գործերով կզբաղի և ի՛նչ դերքի մէջ է:

Այս ուղղութեամբ գրուած տեղեկութիւնները երբ զրկուին Շաշիդի, սիրով վրաս կառնեմ գասաւորել զանոնք և յաջորդաբար հրատարակութեան տալ, ստանձնելով նաեւ Ֆիլիպէ քաղաքին հայ գաղթականութեան անցեալին հետազոտութեան (*) հոգն ու աշխատութիւնը:

Պարբերաբար տեղի ունենալիք հրատարակութեանց մէջ եթէ սխալ բաներ մըն ալ գտնուին և կամ նոր տեղեկութիւններ հասնին, կարելի է ուղղել և աւելի ընդարձակ հատորի մը մէջ ամփոփելով հրատարակել իբրեւ յիշատակարան մը Պուլկարիոյ և Ռումանիոյ հայ գաղութին անշուշտ չմոռնտրով աշխատողներուն տարւ իրենց արժանի պատիւն ու յարգանքը:

Յուսալով թէ այս առաջարկ սիրով պիտի ողջունուի թէ մեր յարգոյ պաշտանակիցներուն կողմէ և թէ ամբողջ հայ հասարակութենէն, վստահ եմ որ այս վերջինս չպիտի

(*) Յաջորդ թուով պիտի հրատարակենք մեր համակրելի աշխատակցին մէկ ուսումնասիրութիւնը Ֆիլիպէի հայ ազգաբնակչութեան անցեալին ու ներկային մասին: Կը յուսանք որ ասիկա օրինակելի խթան մը կըլլայ ուրիշներու լրջօրէն նկատողութեան առնելու ներկայացուած հարցը, որուն կարեւորութիւնը անժխտելի է:

զլանայ իր աջակցութիւնը և քաջալերը, ինքնաբերաբար անոնց առջեւ բանալով գրադարանները:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ



Յ. Կ. ՊՕՆՃՈՒԳԵԱՆ



Իր նիհար գէմքին վրայ աղերակ ու անխնամ մորուքը, և մանաւանդ մանր խաժագոյն աչուրները, խօսուէն արտայայտութեամբ լուռ տառապանքով ապրուած կեանքի մը կարծր գրուագները կը պատմէն սրտաշարժ կերպով:

Կրնամ բռել, Պուլկարիոյ հայ գաղթականութեան ամենէն ուշագրաւ ու ամենէն հետաքրքրաշարժ գէմքն է: Քսան տարի առաջ, երբ տակաւին հայկական խնդիրը իր սաղմնային վիճակին մէջ կը գտնուէր գրեթէ ևւ բան մը գուշակել չէր ի տար ապագայ անլուր յեղաշրջութիւնը. Պօնճուգեան գաւառացի այն ցանցառ հայերէն եղած է, որոնք՝ անարգ բռնութեան մը տաժանքին չհանդուրժելով ու հեռաւոր աղէտներու նախազգացումէն մտախոտով՝ թողած են ամէն բան, հայրենիք, տուն, տեղ, ստացուածք ու ապաստանած են արտասահման, կրնդանութեան շունչ մը փչելով հոս հոն ցանցնուած հայութեան հին ու սարտամ բեկորներուն:

Շահնազարեանի նախկին աշակերտ, ընկերը Չերազի, Յղիայի, Փանոսեանի, ու չորս տարի շարունակ Հայաստանի համալսարանական մի-

ջավայրին ազգեցութեանը տակ ապարամ, Պօնճուգեան ամէն ճիգը թափած է սակայն անծանօթ մը մնալու համար, բոլորովին անշշուկ ու աննշան կեանք մը վարելով վերածնող Պուլկարիոյ մէջ, ու լռիկ հանդարտիկ ազգային դաստիարակութեան ծառայելով՝ ամէն անգամ որ առիթը ներկայացած է:

Ինքը, թէեւ հին դպրոցի աշակերտ, նոր, ազատամիտ գաղափարներու տարածիչն է եղած նոր սերունդին մէջ, ու կերպով մը թեթևացուցած է վտանգը զոր տիրացու-վարժապետներու երամ մը կը մշակէր միշտ արտասահմանի կրթական յարկերուն տակ, անպատուհաս կերպով, մինչև նոր գաղթականութեան վրայ հասնիլը:


Պօնճուգեան, 96 էն մինչև 98 լըրագրական կարեւոր դեր մըն ալ խաղաց, այդ երկու տարուան շրջանին մէջ վարելով խմբագրապետութիւնը Եւրոպայի եւ իր շուրջը հաւաքելով երիտասարդ գրողներու խումբ մը, որ յետոյ պիտի ցրուէր՝ հաստատելու համար անկախ ու կռուող մամուլը՝ Շարժումով: Պօնճուգեան, առանձին գտնալով ինքզինքը, մանաւանդ խրատչած Եւրոպայի բռնած նոր ու անսովոր ուղղութենէն, ետ քաշուեցաւ՝ այս անգամ ինքզինքը բոլորովին նուիրելու համար կրթութեան գործին, որուն զարգացմանը գրականապէս կը ծառայէ ոչ միայն պաշտօնավարելով Վառնայի ազգային վարժարանին մէջ, այլ եւ ուսանող պատանեկութեան համար պատրաստելով յոյժ նպատակայարմար դասագրքեր հայերէն լեզուի ուսուցման համար:

Իր «նոր ընթերցարանի» Բ. տա-

րին ի լոյս ընծայեց. — Ա. ը անցեալ տարի հրատարակ եղած էր եւ այն ատեն կարող անձերու կողմէ գնահատուած իբր յարմար դասագիրքը ընթերցանութեան՝ արտասահմանի համար: Այս Բ. տարին տարակոյս չիկայ որ պիտի արժանանայ միեւնոյն ջնքով ընդունելութեան, վասն զի ոչ միայն մանկավարժական բոլոր պայմանները կը լրացնէ, այլ եւ իր լեզուին յստակութիւնը, միօրինակութիւնը, ոճին զիւրընդունելութիւնը գերազանց առաւելութիւններ են դասագրքերու այն սովին մէջ որով կը տառապին մեր դպրոցները ամէն ատեն:

Հակառակ նիւթական դժուարութիւններուն որոնց յարատւօրէն մատնուած կը գտնուի Պօնճուգեան, եւ հակառակ ֆիզիքական ու հոգեկան տրամագրութեանց որոնք խորհող ու տառապող մտքերու անխուսափելի հետեւանքն են, անվհատ ու անխոնջ կերպով, գրէթէ երիտասարդական աշխուժութեամբ կաշխատի Ընթերցարանին Գ. տարին ալ երեւան բերել յառաջիկայ սեպտեմբերի սկիզբը, որով տարրական երեք դասընթացքի համար՝ արտասահմանի հայ դպրոցները ունեցած կըլլան պատուական դասագրքեր: Այս տեսակ ձեռնարկներ, որոնցմէ ուղղակի ու անմիջական կերպով կօգտուի ազգը, դոնէ պէտք ունին նիւթական քաջալերութեան, ուսկից միայն կրնայ կախում ունենալ նմանօրինակ օգտաւէտ գործերու յաճախումը:

Ե. Ս.



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Հայկական բարեգործութիւնը կարեւոր հարուած մը կը կրէ Գրիգոր Ճանչեանցի անակնունելի մահովը : Այս անունը , թէև յոյժ ծանօթ ուս մամուլին և ուս քաղաքական շրջանակներուն մէջ , գրեթէ անծանօթ էր հայութեան մեծագոյն մասին ասկէջ մինչեւ երեք տարի առաջ , մինչեւ հայ որբութեան ըստեղծման սգալի օրերը : Որբերու աշխարհին մէջ , Ճանչեանց անունը այլ եւս այնքան ժողովրդական դարձած էր որ իր մահը տիրութեան մեծ հով մը պիտի փչէ հոն և բազմաթիւ որբանոցներ անգամ մը եւս սրբայած պիտի ըլլան անոր անհետացմամբ : « Եղբայրական օգնութիւն » անուն գրական ժողովածուն , զոր պարբերաբար հրատարակեց ողբացեալ Ճանչեանց , պատմական հրատարակութիւն մը պիտի մնայ , որովհետև գրքի մը հրատարակութեան հասոյթովը տասերկու որբանոց տարիներով պահուելու շատ եզակի երեւոյթը պարզեց անիկա : Ճանչեանց , իր անսմռանալի գործունէութեամբը , ամբի անջնջելի շիկնումով մը ծածկեց մեր անզգայ մեծատուններուն դէմքը , և բարեգործութիւն ընելու երկմտող մեր հարուստ դասակարգին վճռականապէս հասկցուց թէ ինչպէս պարտաւոր էր շարժիլ ազ-

դին անտէր ու անտիրական մասին հետ : Ճանչեանց անունը գնաց գրուագուեցաւ Պէզճեան ու Սանասարեան անուններուն քով , որոնց դարերու ընթացքին մէջ , հայութիւնը պիտի նայի միշտ պատկառանքով ու անասելի երախտագիտութեամբ :

— Թան հայ որբերու վրայ խօսելով կ'ըսէ . « Գերմանները Հայաստանի մէջ կը պահեն քսան երեք որբանոց , անգլիացիներն ու ամերիկացիները իբր տասերկու հաա և ուսերը տասնի չափ : Գերման մասնախումբերու պետերը , Լէքսիոս , Լիբման , Ռոհրպալս , քանիցս Հայաստան գացած ու իրենց աչքովը տեսած են թշուառութիւնը ուր կը թապրակի հոյ ժողովուրդը : Մնոնք յօգուածներու և գրքերու մէջ երեւան հանած են այս դժբախտ ցեղին չարբաշուրթեան , բարոյական կորուսիւն ու իմացական յատկութիւնները : »

— Մեծ մարդասպանին աջ բազուկը ինչիս բաշա՛ հանդարտօրէն բազմած է Հալէպի վալիութեան թիւին վրայ , առանց նկատողութեան առնելու որ օտար հիւպատոսները չեն կատարեր պաշտօնական անհրաժեշտ այցելութիւնները : Սուլթանը կ'արհամարհէ օտար տէրութեանց ստիպողական դիմումները յիշեալ չարագործը պաշտօնէն վար առնելու համար :

Отношение Н. Драгулевс

Печатью « Ориенталъ » — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՒԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Վարժարանիս աշակերտ առլ փափարող Պատուարժան ծնողաց կը յայտարարեմ որ Հայկական կրթարանի Գ. տաւ ընդլանը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 1/14 ին , միեւնոյն ընդարձակ և օգտուուն շէնքին մէջ , առանց փոփոխման ծրարքի և աջակցութեամբ միեւնոյն ուսուցչական մարմնոյն , որուն պիտի ընկերանայ նաեւ ֆռանսացի ընդհանուր հսկող մը :

Լրացուցիչ դասընթացքի աշակերտներուն համար ուսման առարկաներու մեծագոյն մասը պիտի դաստիարասուի ֆռանսերէն լեզուով : Դասաւանդութեան միեւնոյն եղանակը , աւելի նեղ սահմանի մէջ ու աստիճանաբար , ի դարձ պիտի դըուի բարձագոյն ու միջին դասընթացքներու համար :

Ուսմանց ու գիտութեանց բոլոր կարեւոր ճիւղերը կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորիչ են պուլիարերէնը և ֆռանսերէնը , իսկ կամաւոր են անգլիերէնը և գերմաներէնը , որոնք պիտի աւանդուին ֆռանսերէնով :

Ձութակի և դաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումներով :

Գիշերօթիկներու համար առողջ սնունդ , կատարեալ մարբութիւն և ընդանեկան խնամք :

Տարեթոշակներուն համար պատրաստ եմ ամէն դիւրութիւն ընծայել , եթէ տ'ոնց կանոնաւոր վճարումը կանխաւ ապահովուի ո՛ր և է միջոցաւ :

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԿՐՕՆ ՄԻՐԱՅԷԼԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

ՎԱՌՆԱ

Երկրորդ քաղ, Շիրյէնսիս փողոց, (Սագալլո յէջմէի կից)

Կը տպագրուին հայերէն, պուլկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեառս, հասցէատմս, հարսանեկան հրատիրագիր, ազգարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:

Գունաւոր և ոսկեղօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տառեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԳԻՆԵԻԸ ՅՈՅԺ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նճուրբեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).